

ԴԻԱԿԱՆԵՐԻ ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կետրոն» ՊՈԱԿ-ի գործունեության ոլորտն ուղղակիորեն կապված է և մեծ ազդեցություն ունի Հայաստանի Հանրապետության տարածքում մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման, մարդու իրավունքների պաշտպանության, արդարադատության իրականացման, հանցագործությունների դեմ պայքարի և իրավապահ մարմիններին օժանադակության ցուցաբերման գործում:

Դիակի դատաբժշկական փորձաքննությունը նախաքննություն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշման հիման վրա նեղ մասնագիտական հմտությունների տիրապետող մասնագետների՝ դատաբժշկական փորձագետների կողմից դիակի ուսումնասիրության իրականացումն է, որոշելու համար՝ մահվան պատճառը, վաղեմությունը, վնասվաճքների առկայությունը, առաջացման մեխանիզմը, պատճառական կապը մահվան հետ, հիվանդության առկայությունը, բնույթը, հիվանդագին փոփոխված տեղակայումը, կլինիկական ախտորոշման հավաստիությունը, ինչպես նաև լրացուցիչ հետազոտությունների համար նմուշներ ստանալու, նաև անձը չպարզված դիակների անձի նույնականացման հետազոտություններ անցկացնելու գործառույթների համակարգ է: Դիակի դատաբժշկական փորձաքննությունն ուղղված է դիակի արտաքին, ներքին ուսումնասիրության, լրացուցիչ հետազոտությունների անցկացման, ապացույցների ուսումնասիրման արդյունքում գիտականորեն հիմնավորված և հավաստիության բարձր աստիճան ապահովող փորձագիտական եզրակացության տրամադրմանը:

Հստակ գիտակցելով դատաբժշկական ծառայության կողմից իրականացվող գործառույթների դերն ինչպես արդարադատության իրականացման, այնպես էլ բժշկական թերացումների ուսումնասիրման և կանխարգելման գործում, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ում 2015 թ-ից իրականացվում են միջազգային լավագույն գործելակարգերի և ստանդարտների ներդրման աշխատանքներ:

Դատարժշկական բնագավառի ստանդարտացումը փորձաքննությունների մեթոդների, արդյունքների վերլուծության, փորձագետների մասնագիտական հմտությունների և համապատասխանության գնահատման չափանիշների սահմանման արդյունքում նպաստում է ընդհանուր գործելակարգի մշակմանն ու վերահսկողությանը՝ ծառայության բոլոր մակարդակներում:

Սույն Գործելակարգը սահմանում է դիակների դատարժշկական փորձաքննությունների կազմակերպման համակարգված ընթացակարգեր՝ տվյալների ուսումնասիրությունից մինչև փորձագիտական եզրակացության տրամադրում:

Հաշվի առնելով միջազգային ստանդարտների ներդրմանն ուղղված ժամանակի հրամայականը, «Դատարժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ը հավաստագրվել է «Որակի կառավարման համակարգեր» ստանդարտի /Quality Management Systems/ պահանջներին համաձայն՝ միջազգային ԻՍՕ հավաստագրման առողջուրական խմբի կողմից: Գործընթացն իրականացվել է հետևյալ փուլերով՝ դատարժշկական-փորձագիտական ոլորտին անհրաժեշտ ստանդարտների ուսումնասիրություն, ընտրված ստանդարտի տեղայնացում, պիլոտային փորձարկման շրջան և հավաստագրում:

Ցանկացած գործելակարգի, այդ թվում և Որակի կառավարման համակարգերի, և սույն Գործելակարգի, և այլ գործելակարգերի տեղայնացման ընթացքում պետք է հաշվի առնել, որ դատարժշկական գործառույթներն իրականացնելիս փորձագետներն առաջին հերթին պարտավոր են առաջնորդվել տվյալ երկրում գործող օրենսդրական կարգավորումներով, մեր պարագայում՝

- Հայաստանի Հանրապետության քրեական, քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի համապատասխան հորվածներով,
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում դատարժշկական փորձաքննությունների կազմակերպման չափորոշիչ»-ով:

ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՅԱԿ

Բիշարյան Մ. Ս. (Գործելակարգի պատասխանատու համակարգող) – բ.գ.դ.,
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի

դատական բժշկության ամբիոնի պրոֆեսոր, «ՀՀ ԱՆ Դատաքննչական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն:

Թղթակցական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Մ. Հերացի 5/1, հեռ.՝ +374 10567108

Գաֆարյան Գ.Շ., բ.գ.թ. - «ՀՀ ԱՆ Դատաքննչական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի դատաքննչական փորձագետ, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի դատական բժշկության ամբիոնի դասախոս

Թղթակցական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Մ. Հերացի 5/1, հեռ.՝ +374 10567108

Խաչապրյան Ք.Ս. - «ՀՀ ԱՆ Դատաքննչական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի որակի վերահսկողության բաժնի պետ

Թղթակցական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Մ. Հերացի 5/1, հեռ.՝ +374 10567108

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Պատասխանատու համակարգողը հայտարարում է սույն փաստաթղթի մշակման ընթացքում շահերի բախման բացակայության վերաբերյալ: Փաստաթղթի մշակման գործընթացը չի ֆինանսավորվել:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Պատասխանատու համակարգողն իր երախտագիտությունն է հայտնում ՀՀ առողջապահության նախարարությանը կլինիկական ուղեցույցների և պացիենտի վարման գործելակարգերի ներդրման նախաձեռնության համար, որոնք միանշանակ կատարելագործելու են բուժսպասարկման ոլորտն ու բուժհաստատությունների կողմից տրամադրվող ծառայությունների որակը, հանձնաժողովի նախագահ Հարություն Մանգոյանին՝ խորհրդատվությունների և արդունավետ համագործակցության համար, ինչպես նաև աշխատանքային խմբի բոլոր անդամներին սույն գործելակարգի մշակման և տեղայնացման աշխատանքներում ունեցած մասնագիտական խորհրդատվության համար:

ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՆՔԸ

Սույն Գործելակարգը մշակվել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դատաքննչական գիտագործնական

կենտրոն» ՊՈԱԿ-ի որակի խորհրդի և Դատաքննչական փորձագետների հայկական ասոցիացիայի անդամների կողմից: Միջազգային լավագույն գործելակարգի տեղայնացման ընթացքում հիմք ենք ընդունվել հետևյալ փաստաթյուղի դրույթները՝ Դատաքննչական դիահերձման իրականացման չափորոշիչներ /Դատական բժիշկների ազգային ասոցիացիա, ԱՄՆ / Forensic Autopsy Performance Standards The National Association of Medical Examiners 2016 Inspection, Accreditation and Standards Committee, USA/:

ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ՊԱՑԻԵՆՏԻ ՄՈԴԵԼ

Սույն Գործելակարգը պացիենտի մոդել չի նախատեսում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Բաժին Ա: ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բաժին Բ: ԴԻԱԿԻ ԴԱՏԱՔՆԵԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Բաժին Գ: ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ

Բաժին Դ: ԴԻԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ: ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաժին Ե: ԴԻԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ: ՀԱՏՈՒԿ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաժին Զ: ԴԻԱԿԻ ՆԵՐՔԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Բաժին Է: ՕԺԱՆԴԱԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաժին Ը: ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ և ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

ՆԱԽԱԲԱՆ

Վերջին տարիներին «ՀՀ ԱՆ Դատաքննչական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ը միջազգային համագործակցության շրջանակներում կազմակերպել և իրականացրել է միջոցառումներ, որոնք ուղղված էին միջազգային դատաքննչական

ոլորտի զարգացման ուղղությունների և գերակայությունների ուսումնասիրմանը, մեր երկրի համար ընդունելի մոդելի մշակմանն ու ներդրմանը։ Ոլորտի ուսումնասիրությունը ցուց տվեց, որ ամերիկյան և եվրոպական դատաքնչկական ծառայությունների համար գերակա ուղղություն է ստանդարտների ներդրումն ու որակի քաղաքականության իրականացումը, փորձաքննության իրականացման վրա անմիջական ազդեցություն ունեցող ռեսուրսների գնահատումն ու կատարելագործումը։

Մեր կողմից ներկայացվող «Դիակների դատաքնչկական փորձաքննությունների իրականացման գործելակարգ»-ը ԻՍՕ/ԻԷԿ 17020 ստանդարտի դատաքնչկական ծառայության համար տեղայնացված ամերիկյան մոդելն է։

Սույն Գործելակարգի չափանիշների զգալի մասն արդեն իսկ տեղայնացված է և կիրառվում է «Դատաքնչկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ում, իսկ որոշ ընթացակարգեր մշակման փուլում են։

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Դիակներձում

Բժշկի կողմից կտրվածքների միջոցով դիակի ուսումնասիրությունը, որը կատարվում է մահվան պատճառը որոշելու, մեխանիզմը, հիվանդության տեղակայումը, կիխնիկական ախտորոշումը հաստատելու, ինչպես նաև լրացուցիչ հետազոտությունների համար նմուշներ ստանալու, իրեղեն ապացույցներ հայտնաբերելու, հանգույցյալի անձի նույնացում կատարելու կամ ուսուցանելու բժիշկ մասնագետներին և ուսանողներին։

Մահվան պատճառ

Հիմնական հիվանդությունը կամ վնասվածքը, որը պատճառ է հանդիսացել օրգանիզմում իրար հաջորդող ֆիզիոլոգիական երևույթների, որոնք էլ ի վերջո հանգեցրել են մահվան։

Ուղակի վերահսկողություն

Դիակներձումը կատարող անձնակազմի վերահսկողությունը՝ վերահսկողի անմիջական ներկայության միջոցով։

Դատաբժշկական դիահերձում

Դիահերձում, որը կատարվում է օրենքով սահմանված կարգով՝ դատական բժշկի կողմից կամ նրա անմիջական հսկողությամբ:

Բաժին Ա: ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Մահվան դեպքի օբյեկտիվ և պատշաճ հետաքննության ընթացակարգ

1.1 Մահվան դատաբժշկական դեպքերն ուսումնասիրող փորձագետները պետք է գործեն առանց իրավապահ մարմինների և արդարադատություն իրականացնող համակարգի անհարկի ազդեցությունների:

1.2 Դատաբժշկական փորձագետը պետք է գնահատի մահվան դեպքի հետ կապված հանգամանքները:

Դատաբժշկական փորձագետները իրականացնում են իրենց գործառույթները համագործակցելով իրավապահ մարմինների հետ, միևնույն ժամանակ գործելով վերջիններից անկախ: Դիակի դատաբժշկական փորձաքննության ժամանակ դատաբժշկական փորձագետի նպատակն է մահվան պատճառի և հանգամանքների անաչառ և օբյեկտիվ վերլուծությունն ու գնահատումը:

2. Նախնական քննության ընթացակարգ

Դիակի դատաբժշկական փորձաքննության ժամանակ դատաբժշկական փորձագետն ուսումնասիրում է՝

2.1 բռնի մահերը,

2.2 հայտնի կամ ենթադրյալ ոչ բնական մահերը,

2.3 անսպասելի կամ անբացատրելի մահերը գործնականում առողջ մարդու մոտ,

2.4 նորածինների և երեխաների անսպասելի կամ անբացատրելի մահերը,

2.5 արտասովոր կամ կասկածելի հանգամանքներում առաջացած մահերը,

2.6 ազատազրկման վայրերում գտնվող անձանց մահերը,

2.7 հանրային առողջությանը վտանգ ներկայացնող հայտնի կամ ենթադրյալ հիվանդություններից առաջացած մահերը,

2.8 բժշկի խնամքի տակ չգտնվող անձանց մահերը՝ տնային մահեր:

Բաժին Բ: ԴԻԱԿԻ ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔԸՆՈՒԹՅՈՒՆ

Գործելակարգի այս բաժնի նպատակն է սահմանել դիահերձումների իրականացման նվազագույն չափանիշներ՝ լրացուցիչ կտրվածքների կամ լրացուցիչ հետազոտությունների անցկացման, եզրակացությունների մեկնաբանման և ձևակերպման վերաբերյալ:

3. Դատաբժշկական դիահերձում պահանջող մահվան դեպքերի ընտրության ընթացակարգ

Դատաբժշկական փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ է իրավապահ մարմինների կողմից կայացված դատաբժշկական փորձաքննության անցկացման վերաբերյալ որոշում: Որոշ դեպքերում դատաբժշկական փորձաքննության իրականացումը՝ դատաբժշկական դիահերձումը, լիարժեք քննություն իրականացնելու համար լավ հնարավորություն է ընձեռնում: Այդպիսի դեպքերից են հանգույցյալների անձի նույնացում պահանջող, ջրում հայտնաբերված դիակների, ածխացած կամ կմախքացած մարմինների, թունավորումների, էլեկտրահարության և աշխատավայրում մահացու վնասվածքներ ստանալու դեպքերը: Դիահերձում իրականացնելով պաշտպանվում է հանրային շահը և տրամադրվում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ ուղղված յուրաքանչյուր դեպքի իրավական, հանրային առողջության և հանրային անվտանգության խնդիրներին: Բացի ներքոհիշյալ դեպքերից, այլ դեպքերում դիակի դատաբժշկական փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ որոշումը պահանջում է մասնագիտական խոհեմություն, կանոնակարգվում է տվյալ պետության օրենքներով, նորմատիվ փաստաթղթերով և այլն: Ներքոհիշյալ դեպքերում հանրային շահն այնքան համոզիչ է, որ պետք է միշտ ենթադրել, որ կառաջանան հարցեր, որոնց պատասխանելու համար անհրաժեշտ ինֆորմացիա կարելի է ձեռք բերել միայն դատաբժշկական դիահերձման միջոցով:

Դիակի դատաբժշկական փորձաքննություն անհրաժեշտ է անցկացնել հետևյալ դեպքերում՝

3.1 մահն առաջացել է հայտնի կամ ենթադրյալ բացահայտ բռնության հետևանքով,

3.2 նորածինների կամ երեխաների մահն անսպասելի և անբացատրելի է,

- 3.3 մահը առընչվում է ոստիկանության գործողությունների հետ,
- 3.4 մահը ակնհայտորեն ոչ բնական է և տեղի է ունեցել ազատազրկման վայրերում,
- 3.5 մահը հետևանք է աշխատավայրում ստացած վնասվաճքների*,
- 3.6 մահն առաջացել է ակնհայտ էլեկտրահարությունից*,
- 3.7 մահը վրա է հասել ալկոհոլի, դեղերի կամ թույների ակնհայտ ազդեցությունից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ էական ժամանակահատված է անցել և առկա են պատշաճ արձանագրված բժշկական տվյալներ և վնասվաճքների բացակայություն,
- 3.8 մահն առաջացել է առանց վկաների կամ ենթադրյալ ջրահեղձման արդյունքում*,
- 3.9 անհայտ անձի դիակ է, և դիահերձումն օգնում է անձի նույնականացմանը,
- 3.10 դիակը կմախքացած է,
- 3.11 դիակն ածխացած է,
- 3.12 դատաքննիչը համարում է, որ դիահերձումն անհրաժեշտ է մահվան պատճառը որոշելու, վնասվաճքները/հիվանդությունները փաստագրելու կամ ապացույցներ հավաքելու համար,
- 3.13 հանգուցյալի մահը վրա է հասել ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում և դիահերձումն անհրաժեշտ է վնասվաճքներն արձանագրելու և/կամ մահվան պատճառը որոշելու համար:
- *Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ մինչև մահանալը պատշաճ կարգով և բավարար բժշկական հետազոտություններ են կատարվել, արձանագրվել են ստացված արդյունքները, որոնք այլապես պետք է հայտնաբերվեին դիահերձման արդյունքում:

4. Դատաքննիչական դիահերձման իրականացման ընթացակարգ

Դատաքննիչական դիահերձումը բժշկական գործողություն է: Դատաքննիչական դիահերձումը պահանջում է մասնագիտական հմտությունների տիրապետում՝ հավելյալ կտրվածքներ և լաբորատոր հետազոտություններ կատարելու անհրաժեշտությունը որոշելու համար: Դատաքննիչական դիահերձումը պետք է կատարվի հավաստագրված բժիշկի կողմից, որը դատական բժիշկ է կամ մասնագիտանում է դատական բժշկության մեջ (օրդինատոր): Դատաքննիչական դիահերձման դրակի պատասխանատվությունն ընկնում է դատաքննիչական փորձագետի վրա, որի պարտականությունն է օժանդակ անձնակազմի աշխատանքի ուղղակի վերահսկողությունը: Ոչ դատական բժիշկներին՝ առանց

ուղղակի վերահսկման և ուղղորդման դատաքնչկական դիահերձում կատարել թույլ տալը հղի է լուրջ սխալներով և բացթողումներով:

Դիահերձումները պետք է կատարվեն.

4.1 դատական բժիշկը կամ օրդինատորները կատարում են թույլ դիահերձումները,

4.2 դատական բժիշկը ուղղակիորեն վերահսկում է օգնականների և օրդինատորների աշխատանքը,

4.3 դատական բժիշկը կամ օրդինատորները կատարում են թույլ հեռացված օրգանների ուսումնասիրությունները,

4.4 դատական բժիշկը որոշում է լրացուցիչ կտրվածքների կամ հավելյալ ուսումնասիրությունների անհրաժեշտությունը,

4.5 դատական բժիշկը չպետք է կատարի տարեկան 325 դիահերձումից ավել:

Խորհուրդ է տրվում տարեկան կատարել առավելագույնը 250 դիահերձում:

5. Արդյունքների մեկնաբանման և եզրակացության ձևակերպման ընթացակարգ

Փորձաքննության արդյունքների մեկնաբանումն ու եզրակացության ձևակերպումը պետք է կատարել միայն անհրաժեշտ տվյալների ձեռքբերումից և համապատասխան մշակումից հետո:

Դիահերձումը պետք է կատարվի՝

5.1 դատական բժիշկը ծանոթանում և մեկնաբանում է իր պահանջած թույլ լաբորատոր հետազոտությունների արդյունքները,

5.2 դատական բժիշկը ծանոթանում է իր պահանջած թույլ օժանդակ և խորհրդատվական արձանագրությունների հետ,

5.3 դատական բժիշկը ծանոթանում է մասնագիտական եզրակացության տրամադրման համար անհրաժեշտ քննչական նյութերի, բժշկական փաստաթղթերի, դեղամիջոցների (եթե առկա է) և դեպքի վայրի հետ,

5.4 դատական բժիշկը որոշում է մահվան պատճառը:

Բաժին 4. ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ

Գործելակարգի այս բաժնի նպատակն է հաստատել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են՝ հանգուցյանի անձի լիարժեք նույնականացման, այն

տվյալների արձանագրման և պահպանման համար, որոնք անհրաժեշտ են հետագայում առաջացող հարցերին պատասխանելու, ինչպես նաև չնույնականացված մնացորդները հուղարկավորելուց առաջ նույնականացնելու համար:

6. Նույնականացման համակարգման ընթացակարգ

Նույնականացման մեթոդների ընտրությունը կախված է յուրաքանչյուր կոնկրետ դեպքի հանգամանքներից, սակայն հնարավոր է ներառել մնացորդների ուղղակի կամ լուսանկարների միջոցով ուսումնասիրությունը, ատամնաշարի, մատնահետքերի, ռենտգեն ժապավենների համեմատական ուսումնասիրությունը: Դեմքի լուսանկարը՝ համարակալումով, փաստագրվում, պահպանվում և հետագայում օգտագործվում է նույնականացման ժամանակ: Եթե համեմատաբար առաջնային մեթոդներով հնարավոր չի լինում կատարել անձի նույնականացում, կիրառվում է անձի նույնականացման ԴՆՁ հետազոտություն՝ համեմատելով կենդանության օրոք վերցված նշմուշների կամ արյունակից հարազատներից վերցված նմուշների հետ: ԴՆՁ նմուշը հատկապես կարևոր է հետագայում նույնականացման, ինչպես նաև հնարավոր ազգակցական կապի միջոցով գենետիկական նույնականացման և քրեագիտական համեմատությունների համար: Անձի նույնականացման համար կիրառվող տվյալների պահպանումը կարևոր է հետագայում առաջացող հարցերի պարզաբանման և անձի կրկնակի նույնականացման անհրաժեշտության դեպքում:

Դիակի նույնականացման ժամանակ.

6.1 դատական բժիշը գնահատում է նույնականացման առաջնային մեթոդների հավաստիության աստիճանը,

6.2 դատական բժիշը կամ ներկայացուցիչը կատարում է լուսանկարահանում դեպքի համարի նշումով,

6.3 դատական բժիշը դիակիերձման ժամանակ վերցնում և պահպանում է (արխիվացնում) նմուշներ՝ ԴՆՁ հետազոտության համար:

7. Անհայտ դիակների ուսումնասիրման ընթացակարգ

Մինչև անհայտ դիակի հանձնումը պետք է կատարվի օբյեկտիվ տվյալների արձանագրում և պահպանում, հետագայում՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելու նպատակով: Դատաքաղական դիակիերձումը կարող է բացահայտել բժշկագիտական բնույթի տվյալներ (վիճակներ), որոնք կնպաստեն անձի

նույնականացմանը: Ամբողջ մարմնի ռենտգեն հետազոտության արդյունքները փաստում են կմախքի բնութագրիչները և ռենտգենաբանորեն տեսանելի օտար մարմինները, ինչպիսիք են՝ գնդակները, ոիթմավարները և արհեստական հոդերը: Ատամների քարտեզը (օդոնտոգիր, ատամնագիր) և ռենտգեն հետազոտությունը պահպանում են ատամների բնութագիրը: Արձանագրվում են հանգուցյալի հագուստներին և անհատական առանձանահատկություններին վերաբերվող տվյալներ, որոնք կարող են ճանաչվել մերձավոր հարազատների կողմից: Ինչպես փաստաթղթային, այնպես էլ ԴՆՇ նմուշների հավաքագրումն ու պատշաճ պահպանումն ապահովում են անձը չբացահայտված դիակի հետագա նույնականացման համար՝ առանց արտաշիրիմման անհրաժեշտության:

Մինչև անհայտ անձի դիակը հանձնելը դատական բժիշկը պետք է.

- 7.1 կատարի դատաքննության դիակի հերձում,
- 7.2 կատարի կամ հանձնարարի կատարել գլխի, պարանոցի, կրծքավանդակի, վերջույթների, իրանի ամբողջական ռենտգեն նկարահանում,
- 7.3 կատարի ատամների քարտեզագրում և ռենտգեն նկարահանում,
- 7.4 արձանագրի կամ հանձնարարի արձանագրել հանգուցյալի հագուստները և անհատական առանձանահատկությունները:

Բաժին Դ: ԴԻԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործելակարգի այս բաժնի նպատակն է սահմանել դիակի արտաքին գննության/ուսումնասիրության նվազագույն չափանիշները:

8. Նախնական աշխատանքների համակարգման ընթացակարգ

Նախնական գործողությունները ենթադրում են առկա տվյալների գնահատման անհրաժեշտություն՝ նախքան դատաքննության դիակի առաջականացնելը, որպեսզի

- նախագծել դատաքննության դիակի առաջականացնելը,
- պատասխանել տվյալ դեպքին առնչվող հարցերին,
- արձանագրել ապացույցները, դիակի արտաքին գննության նախնական տվյալները, հագուստները և յուրահատուկ նշանները և,
- հնարավորինս վերականգնել անձին բնորոշ նշանների փոփոխությունները, որոնք առաջացել են ստացած վնասվածքների արդյունքում: Ինչպես

Վիրաբույժը չի սկսում վիրահատությունը առանց նախապես հիվանդության պատմությանը ծանոթանալու և հիվանդին զննելու, այնպես էլ դատական բժիշկը պետք է ծանոթանա մահվան պատմությանը, գործի հանգամանքներին, զննի դիակը, որոշելու համար՝ արդյոք ցուցված է կատարել դատարժշկական դիահերձում, թե ոչ, ապա իրականացնի դատարժշկական դիահերձումը՝ առաջնորդվելով դիակի փորձաքննությանն առաջադրված հարցերով:

Նախնական գործողությունները հետևյալն են.

- 8.1 դիահերձումից առաջ դատական բժիշկը ծանոթանում է դեպքի հանգամանքների հետ,
- 8.2 դատական բժիշկը կամ օգնականը չափում է հասակը /մարմնի երկարությունը/,
- 8.3 դատական բժիշկը կամ օգնականը կշռում և արձանագրում է մարմնի քաշը,
- 8.4 դատական բժիշկը կատարում է արտաքին ուսումնասիրություն՝ նախքան ներքին ուսումնասիրություն կատարելը,
- 8.5 դատական բժիշկը կամ օգնականը կատարում է լուսանկարում կամ նկարագրում է հանգույցալի արտաքին առանձնահատկությունները,
- 8.6 իրավապահ մարմինների ներկայացված որոշման առկայության դեպքերում դատական բժիշկը արձանագրում է իրեղեն ապացույցները՝ հագուստները և որոշում հագուստների և մարմնի վնասվածքների համապատասխանությունը,
- 8.7 դատական բժիշկը կամ օգնականը հանում է հագուստները,
- 8.8 դատական բժիշկը կամ օգնականը լուսանկարում կամ թվարկում է հագուստները և անհատական առանձնահատկությունները:

9. Արտաքին (Փիզիկական) բնութագրերի արձանագրման ընթացակարգ

Արտաքին ուսումնասիրության ժամանակ արձանագրվում են անձին յուրահատուկ նշանները, հիվանդությունների, վնասվածքների մասին վկայող նշաններն ու բժերը, կամ դրանց բացակայությունը, և մահվան նշանները: Այս տվյալներն օգտագործվում են անձի հնարավոր նույնականացման ժամանակ՝ հաստատելով կամ ժխտելով նույնականացման փաստը: Հիվանդությունների և վնասվածքների մասին վկայող նշանների արձանագրումը դատարժշկական դիահերձման առաջնային նպատակն է:

Դատական բժիշկը պետք է:

- 9.1 արձանագրի մոտավոր տարիքը,
- 9.2 որոշի սեռը,
- 9.3 արձանագրի կամ նկարագրի ռասսային պատկանելությունը կամ ռասսայական բնութագրերը,
- 9.4 նկարագրի մազերը,
- 9.5 նկարագրի աչքերը,
- 9.6 նկարագրի մարմնի ոչ նորմալ (անոմալ) առանձնահատկությունները,
- 9.7 արձանագրի տեսանելի սահիերը, դաշվածքները, մաշկի ախտահարումները և անդամահատումները,
- 9.8 արձանագրի ատամնաշարի վիճակը՝ առկա կամ բացակա ատամները,
- 9.9 զննի և նկարագրի գլուխը, պարանոցը, կրծքավանդակը, որովայնը և ձեռքերը,
- 9.10 զննի և նկարագրի մարմնի հետին մակերեսը և արտաքին սեռական օրգանները,
- 9.11 արձանագրի բժշկական կամ վիրաբուժական միջամտության մասին վկայող նշանները:

10. Դիակային երևոյթների արձանագրման ընթացակարգ

Դիակային բժերի նկարագրությունն օգնում է պատասխանելու արյունազեղումների և դիակի դիրքի վերաբերյալ առաջադրված հարցերին: Հետմահու արտեֆակտների արձանագրումը կարող է կիրառվել դիակի դատարժշկական դիակերձման ժամանակ հայտնաբերված տվյալների մեկնաբանման ժամանակ: Նշված բոլոր տվյալները կարող են օգտագործվել մահվան վաղեմութան որոշման ժամանակ:

Դատական բժիշկը պետք է:

- 10.1 նկարագրի դիակային բժերը,
- 10.2 նկարագրի դիակային երևոյթները,
- 10.3 նկարագրի դիակի բալգամացիայի մասին վկայող նշանները,
- 10.4 նկարագրի նեխային փոփոխությունները (դիակի քայլայման նշանները),
- 10.5 նկարագրի դիակային փայտացումը:

**Բաժին Ե: ԴԻԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ: ՀԱՏՈՒԿ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Գործելակարգի այս բաժնի նպատակն է դիակների արտաքին ուսումնասիրության համար նվազագույն չափանիշների սահմանումը՝ վնասվածքների կամ սեռական հանցագործությունների կասկածի փաստագրմամբ:

11. Սեռական հանցագործության կասկածի դեպքում աշխատանքների համակարգման ընթացակարգ

Խծուծների, սանրելու միջոցով ստացված նմուշների, խուզվածքների և ապացույցների հետքերի հավաքագրումը կարող է անհրաժեշտ լինել՝

- որոշելու համար, հնարավոր սեռական հանցագործությունը,
- տարբեր, առաջին հայացքից միմյանց հետ ընդհանրություն չունեցող մահվան դեպքերը իրար հետ կապելու համար,
- մահվան դեպքը հանցագործի հետ կապելու համար:

Սեռական հանցագործության կասկածի դեպքում նմուշառվում են քսութներ, մազարմատով մազեր և եղունգներ՝ ԴՆՇ հետազոտության իրականացման համար: Նմուշառումն իրականացվում է համաձայն ԴՆՇ հետազոտության նմուշառման ստանդարտ գործառնական ընթացակարգի պահանջների:

Դատական բժիշկը նախքան դիակի մաքրումը պետք է՝

11.1 բերանի խոռոչի, հեշտոցի և ուղիղ աղու խոռոչների պարունակությունից խծուծով քսութ վերցնի.

11.2 ցայլքի մազածածկույթից սանրի կամ կաչուն ժապավենի միջոցով նմուշներ վերցնի.

11.3 եղունգների կտորներ վերցնի.

11.4 ցայլքի և գլխի շրջաններից մազարմատով մազերի նմուշներ վերցնի.

11.5 հայտնաբերի և պահպանի օտար մազերը, թելերը և կենսաբանական հետքերը:

12. Վնասվածքների ուսումնասիրության և արձանագրման ընթացակարգ

Ընդհանուր դրույթներ

Վնասվածքների արձանագրումը կարևոր է, վնասվածքների առաջացման մեխանիզմների՝ արդյոք վնասվածքները դժբախտ պատահարի, սպանության կամ ինքնասպանության արդյունք են, ինչպես նաև վնասվածք պատճառած առարկայի որոշման համար: Դատարանում կարելի է օգտագործել վնասվածքների գրավոր, սինեմատիկ և լուսանկարչական արձանագրություններ: Հետազոտությունները և ձեռք բերված տվյալները արձանագրվում են, հաստատելու կամ հերքելու մեկնաբանությունները, դատարանին ապացույցներ տրամադրելու և որպես փաստ՝ պահպանման համար:

Դատական բժիշկը պետք է՝

- 12.1 Նկարագրի վնասվածքները,
- 12.2 Նկարագրի վնասվածքի տեսակը,
- 12.3 Նկարագրի վնասվածքի տեղակայումը,
- 12.4 Նկարագրի վնասվածքի չափը,
- 12.5 Նկարագրի վնասվածքի ձևը,
- 12.6 Նկարագրի վնասվածքի յուրահատուկ ձևը:

13. Լուսանկարչական փաստագրման ընթացակարգ

Լուսանկարչական փաստագրումը լրացնում է վնասվածքների գրավոր փաստագրմանը և ստեղծում է դատարժկական դիակերձման մանրամանների մշտական արձանագրություն: Մեծ վերքերի և վնասվածքների լուսանկարչական փաստագրումը պետք է տվյալ վերքի առնվազն մեկ լուսանկարում մասշտար ներառի, որը թույլ կտա 1:1 վերարտադրություն:

Դատական բժիշկը կամ համապատասխան մասնագետը պետք է՝

- 13.1 լուսանկարի վնասվածքները՝ առանց արյան, օտար նյութերի և հագուստի,
- 13.2 լուսանկարի մեծ վնասվածքները՝ ամջող տարածքով /մասշտարով/:

14. Հրազենային վնասվածքների փաստագրման ընթացակարգ

Հրազենային վնասվածքների դեպքում արձանագրությունները կազմվում են մանրամասնորեն, հաշվի առնելով այն փաստը, որ հետագայում հնարավոր կրկնակի փորձաքննության դեպքում մեկ այլ դատական բժիշկ իր անկախ եզրակացությունը կազմելու է հիմնվելով արդեն իսկ փաստագրված տվյալների վրա:

Դատական բժիշկը պետք է՝

- 14.1 նկարագրի վնասվածքները,
- 14.2 չափի վերքի չափը,
- 14.3 որոշի գլխի, պարանոցի, իրանի կամ ստորին վերջույթների մաշկային վերքերի տեղակայումը՝ չափելով վերջիններիս հեռավորությունը գլխի գագաթային հատվածից կամ ոտքի ներբաններից,
- 14.4 որոշի գլխի, պարանոցի, իրանի կամ ստորին վերջույթների մաշկային վերքերի տեղակայումը՝ չափելով հեռավորությունն առաջային կամ հետին միջին գծից,
- 14.5 որոշի վերին վերջույթների մաշկային վերքերի տեղակայումը՝ չափելով անատոմիական անշարժ կետերից,
- 14.6 նկարագրի մաշկային վերքի տեղակայումը անատոմիական շրջանում,
- 14.7 նկարագրի մրի և կետային այրվածքների (վառողի մասնիկներ) առկայությունը կամ բացակայությունը,
- 14.8 նկարագրի քերծման գոտու, խանձվածքի, փողաբերանի արտատպվածքի, պատովածքների առկայությունն ու բացակայությունը:

15. Սուր գործիքներով պատճառված վնասվածքների փաստագրման ընթացակարգ

Սուր գործիքներով պատճառված վնասվածքների դեպքում արձանագրությունները կազմվում են մանրամասնորեն, հաշվի առնելով այն փաստը, որ հետագայում հնարավոր կրկնակի փորձաքննության դեպքում մեկ այլ դատական բժիշկ իր անկախ եզրակացությունը կազմելու է հիմնվելով արդեն իսկ փաստագրված տվյալների վրա:

Դատական բժիշկը պետք է՝

- 15.1 նկարագրի վերքը,
- 15.2 չափի վերքի չափը,

- 15.3 նկարագրի վերքի տեղակայումն անատոմիական շրջանում,
- 15.4 գնահատի վերքի խորությունը,
- 15.5 որոշի ընդգրկող օրգանները և կառուցները,
- 15.6 գնահատի ծակած-կտրած վնասվածքի վերքային խողովակի ուղղությունը:

16. Զերմային վնասվածքների փաստագրման ընթացակարգ

Զերմային վնասվածքների դեպքում արձանագրությունները կազմվում են մանրամասնորեն, հաշվի առնելով այն փաստը, որ հետագայում հնարավոր կրկնակի փորձաքննության դեպքում մեկ այլ դատական բժիշկ իր անկախ եզրակացությունը կազմելու է հիմնվելով արդեն իսկ փաստագրված տվյալների վրա:

Դատական բժիշկը պետք է՝

- 16.1 նկարագրի այրվածքի տեսքը,
- 16.2 նկարագրի այրվածքի տարածվածությունը:

17. Արտասովոր/յուրահատուկ ձև ունեցող վնասվածքների փաստագրման ընթացակարգ

Յուրահատուկ ձև ունեցող վնասվածքների դեպքում արձանագրությունները կազմվում են մանրամասնորեն, հաշվի առնելով այն փաստը, որ հետագայում հնարավոր կրկնակի փորձաքննության դեպքում մեկ այլ դատական բժիշկ իր անկախ եզրակացությունը կազմելու է հիմնվելով արդեն իսկ փաստագրված տվյալների վրա:

Կծած վերքերից պետք է քսուք վերցնել՝ ԴՆՁ հետազոտության համար՝ հետագայում հանցագործի ԴՆՁ նմուշի հետ համեմատական հետազոտություն/նոյնականացում անցկացնելու համար:

Դատականն բժիշկը պետք է՝

- 17.1 չափի վնասվածքի չափը,
- 17.2 նկարագրի վնասվածքի տեղակայումը,
- 17.3 նկարագրի վնասվածքի յուրահատուկ ձևը,
- 17.4 թարմ կամ վերջերս առաջացած կծած վերքից քսուք վերցնի:

Բաժին 2. ԴԻԱԿԻ ՆԵՐՔԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գործելակարգի այս բաժնի նպատակը դիակի ներքին ուսումնասիրությունների համար նվազագույն չափանիշների սահմանում է:

18. Կրծքավանդակ և որովայնի խոռոչներ: Ուսումնասիրության ընթացակարգ

Հաշվի առնելով այն փաստը, որ որոշ փոփոխություններ հայտնաբերվում են միայն տեղում ստուգելով՝ կրծքավանդակի և որովայնի խոռոչները պետք է ուսումնասիրվեն օրգանների հեռացումից առաջ և հետո, այսպիսով հայտնաբերելով հիվանդությունների, վնասվածքների և բժշկական միջամտությունների նշանները:

Դատական բժիշկը պետք է՝

- 18.1 ուսումնասիրի ներքին օրգանները տեղում,
- 18.2 նկարագրի կպումների և ախտաբանական հեղուկների առկայությունը,
- 18.3 փաստագրի բժշկական սարքավորումների ոչ նորմալ տեղակայումը,
- 18.4 նկարագրի վիրահատության մասին վկայող տվյալներ:

19. Ներքին օրգաններ և ընդերք: Ուսումնասիրության ընթացակարգ

Հիմնական ներքին օրգանները և ընդերքը պետք է ուսումնասիրվեն դիակից նրանց հեռացնելուց հետո, այսպիսով հայտնաբերելով հիվանդությունների, վնասվածքների և բժշկական միջամտությունների նշանները:

Անհրաժեշտ գործողություններ՝

- 19.1 դատական բժիշկը կամ օգնականը հեռացնում է օրգանները գանգի, կրծքավանդակի, որովայնի և կոնքի խոռոչներից,
- 19.2 դատական բժիշկը կամ օգնականն արձանագրում է գլխուղեղի, սրտի, թոքերի, լյարդի, փայծաղի և երիկամների կշռման արդյունքները,
- 19.3 դատական բժիշկը կտրվածքների միջոցով ուսումնասիրում և նկարագրում է օրգանները:

20. Գանգի խոռոչ և գլուխ: Ուսումնասիրության ընթացակարգ

Հաշվի առնելով այն փաստը, որ որոշ փոփոխություններ հայտնաբերվում են միայն տեղում ստուգելով՝ գլխի մաշկը և գանգի խոռոչի պարունակությունը պետք է

ուսումնասիրվեն գլխուղեղի հեռացումից առաջ և հետո, այսպիսով հայտնաբերելով հիվանդությունների, վնասվածքների և բժշկական միջամտությունների նշանները:

Անհրաժեշտ գործողություններ՝

- 20.1 դատական բժիշկը պետք է հետազոտի և նկարագրի գլխի մաշկը, գանգը և ուղեղապատյանները,
- 20.2 դատական բժիշկը պետք է փաստագրի ցանկացած վերկարծություններին, ենթակարծություններին կամ ենթառություններին արյունազեղումները,
- 20.3 դատական բժիշկը պետք է հետազոտի գլխուղեղը տեղում նախքան հեռացնելը և կտրվածքների միջոցով ուսումնասիրելը,
- 20.4 դատական բժիշկը պետք է փաստագրի թարախային արտադրությունը և ախտաբանական հեղուկի առկայությունը,
- 20.5 դատական բժիշկը կամ ներկայացուցիչը հեռացնում է կարծր թաղանթը և դատական բժիշկն ուսումնասիրում է գանգի ուկրերը:

21. Պարանոց: Ուսումնասիրության ընթացակարգ

Պարանոցի առաջային կեսի մկանները, փափուկ հյուսվածքները, շնչուղիները և անոթները պետք է ուսումնասիրվեն, հայտնաբերելու համար հիվանդությունների, վնասվածքների և բժշկական միջամտությունների նշանները: Կտրվածքների շերտ առ շերտ կատարումն անհրաժեշտ է պարանոցի առաջային կեսի վնասվածքի լիարժեք գնահատման համար: Վերին շնչուղիների, ըմպանի, կերակրափողի վերին հատվածի հեռացումը և հետագա ուսումնասիրությունն այս գնահատման համար անհրաժեշտ բաղադրիչ է: Պարանոցի հետին կեսի ուսումնասիրությունն անհրաժեշտ է, եթե կասկածվում է պարանոցի քողարկված վնասվածք:

Դատական բժիշկը պետք է՝

- 21.1 տեղում ուսումնասիրի պարանոցի առաջային կեսի մկանները և փափուկ հյուսվածքները,
- 21.2 ապահովի պարանոցի օրգանների և շնչուղիների պատշաճ հեռացումը,
- 21.3 ուսումնասիրի պարանոցի օրգանները և շնչուղիները,
- 21.4 ուսումնասիրի պարանոցի հետին կեսը՝ քողարկված վնասվածքի կասկածի դեպքում,

21.5 պարանոցի վնասվածքների դեպքում կատարի պարանոցի առաջային կեսի ուսումնասիրություն:

22. Թափանցող վնասվածքների՝ ներառյալ հրազենային և սուր գործիքներով պատճառված վնասվածքներ փաստագրման ընթացակարգ

Թափանցող վնասվածքների դեպքում արձանագրությունները կազմվում են մանրամասնորեն, հաշվի առնելով այն փաստը, որ հետագայում հնարավոր կրկնակի փորձաքննության դեպքում մեկ այլ դատական բժիշկ իր անկախ եզրակացությունը կազմելու է հիմնվելով արդեն իսկ փաստագրված տվյալների վրա: Օտար մարմինների վերականգնումն ու փաստագրումը կարևոր է ապացուցողական նպատակներով: Ներքին վնասվածքի ընթացքը պետք է նկարագրվի՝ ըստ վնասված օրգանների և հյուսվածքների՝ նշելով համապատասխան վնասված օրգանների և հյուսվածքների դեֆեկտների չափերը:

Դատական բժիշկը պետք է

- 22.1 հայտնաբերի ներքին և արտաքին վնասվածքների փոխադարձ կապը,
- 22.2 նկարագրի և փաստագրի վերքային խողովակի ընթացքը,
- 22.3 նկարագրի և փաստագրի վերքի ուղղությունը,
- 22.4 վերականգնի օտար մարմինների ապացուցողական արժեքը,
- 22.5 նկարագրի և փաստագրի վերականգնված օտար մարմինը:

23. Բութ վնասվածքների փաստագրման ընթացակարգ

Բութ վնասվածքների դեպքում արձանագրությունները կազմվում են մանրամասնորեն, հաշվի առնելով այն փաստը, որ հետագայում հնարավոր կրկնակի փորձաքննության դեպքում մեկ այլ դատական բժիշկ իր անկախ եզրակացությունը կազմելու է հիմնվելով արդեն իսկ փաստագրված տվյալների վրա:

Դատական բժիշկը պետք է

- 23.1 նկարագրի ներքին և արտաքին վնասվածքները՝ հայտնաբերելով համապատասխան առընչությունները,
- 23.2 նկարագրի և փաստագրի ուկրային համակարգի վնասվածքները,
- 23.3 նկարագրի և փաստագրի ներքին օրգանների, կառուցների և փափուկ հյուսվածքների վնասվածքները:

Բաժին Է: ՕԺԱՆԴԱԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործելակարգի այս բաժնի նպատակն է սահմանել նվազագույն չափանիշներ՝ լրացուցիչ օժանդակող ուսումնասիրությունների/հետազոտությունների անցկացման համար: Այս բաժինը նաև անդրադառնում է որոշ սարքավորումների կիրառման և խորհրդատվության հասանելիության անհրաժեշտությունը: Դատաթունաբանական եզրակացությունների համար այն նաև սահմանում է ուսումնասիրության եզրակացության բովանդակությունը, որն անրաժեշտ է դատական բժշկին՝ մեկնաբանելու համար արդյունքները և սահմանում է ապացույցների ձեռք բերման և փաստագրման համար նվազագույն չափանիշներ:

24. Ծառագայթային ուսումնասիրության ընթացակարգ

Նորածինների ճառագայթային ուսումնասիրությունն անհրաժեշտ է ոչ ակնհայտ կոտրվածքները հայտնաբերելու համար, որոնք կարող են լինել երեխաների նկատմամբ կատարված բռնությունների միակ ապացույցը: Ծառագայթային ուսումնասիրությունը հայտնաբերում է օտար մարմինների և բեկորների առկայությունը և տեղակայումը: Ածխացած դիակների դեպքում կարող են բացակայել թափանցող վնասվածքների արտաքին նշանները և նույնացման համար անհրաժեշտ բնորոշ հատկանիշնները:

Դատական բժիշկը կամ օգնականը պետք է

- 24.1 կատարի բոլոր նորածինների ռենտգեն հետազոտություն,
- 24.2 կատարի պայթյունի զոհերի ռենտգեն հետազոտություն,
- 24.3 կատարի հրազենային վնասվածքով դիակների ռենտգեն հետազոտություն,
- 24.4 կատարի ածխացած դիակների ռենտգեն հետազոտություն,
- 24.5 կատարի ռենտգեն հետազոտություն, եթե նեխումը թաքցնում կամ փոփոխում է նույնացման համար անհրաժեշտ բնորոշ նշանները և/կամ վնասվածքները:

25. Լրացուցիչ լաբորատոր ուսումնասիրությունների անցկացում: Նմուշառման ընթացակարգ

Նմուշները պետք է վերցվեն, պիտակավորվեն և պահպանվեն այնպես, որ վերջիններս պիտանի լինեն համապատասխան անհրաժեշտ լաբորատոր ուսումնասիրությունների իրականացման և ուսումնասիրությունների արդյունքների հավաստիության համար: Նմուշառման ժամանակ նշվում է արյան նմուշի աղբյուրը՝ արդյունքների պատշաճ մեկնաբանման համար: Հանկարծամահությունների, անբացատրելի մահերի դեպքում, երբ դիահերձման ավարտին մահվան պատճառն անորոշ է մնում, եթե հնարավոր է՝ պետք է վերցնել արյուն կամ այլ անհրաժեշտ նմուշ՝ հետագայում հնարավոր գենետիկական ուսումնասիրության համար:

Դատական բժիշկը կամ օգնականը պետք է՝

- 25.1 վերցնի արյուն, մեզ և ապակենման մարմին,
- 25.2 նմուշառված նյութերը փաթեթավորի, նշագրի և պահպանի,
- 25.3 արձանագրի նմուշառված նյութի ծագումը, եթե դա արյուն է, կենտրոնական է, ծայրամասային, թե որևէ խոռոչից է վերցված:

26. Հյուսվածաբանական ուսումնասիրություն

Հյուսվածաբանական ուսումնասիրությունը կարող է հայտնաբերել մահվան պատճառ հանդիսացող ախտաբանական փոփոխությունները:

Դատական բժիշկը պետք է՝

- 26.1 իրականացնի հյուսվածաբանական հետազոտություն, երբ դիահերձման արդյունքում, գործի հանգամանքների, դեպքի վայրի գննության արդյունքների գնահատառումից և թունաբանական հետազոտություններից հետո մահվան պատճառի խելամիտ բացատրություն հնարավոր չի լինում տալ, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է կմախքացում կամ խիստ արտահայտված նեխային փոփոխություններ: Դիակի դատաբժշկական դիահերձման ընթացքում վերցվում են նմուշներ հյուսվածաբանական հետազոտություն անցկացնելու նպատակով:

27. Լրացուցիչ ծառայությունների և սարքավորումների հասանելիության անհրաժեշտությունը

Դատական բժշկին պետք է հասանելի լինեն որոշակի ծառայություններ, սարքավորումներ և ուսումնասիրություններ: Ճառագայթային հետազոտման արդյունքները, մարմնի և օրգանների քաշերը անհրաժեշտ են որպեսզի գնահատվի ախտաբանական գործընթացը: Այս գործողությունները պետք է հասանելի լինեն դատարժշկական դիահերձման ժամանակ: Նաև խելամիտ և գործնական առումով նպատակահարմար և անվտանգ չէ օրգաններն ու մարմինները կշռելու և ճառագայթային հետազոտության ենթարկելու համար տեղափոխել այլ վայր:

Դատական բժշկին պետք է հասանելի լինեն հետևյալ ծառայություններն ու մասնագետները՝

- 27.1 հյուսվածքանական ուսումնասիրություն,
- 27.2 կենսաքիմիական ուսումնասիրություն,
- 27.3 թունաբանական ուսումնասիրություն,
- 27.4 մանրէաբանական ուսումնասիրություն,
- 27.5 ճառագայթաբան (ռադիոլոգ),
- 27.6 դիահերձարանում ճառագայթային ուսումնասիրության սարքավորում,
- 27.7 դիահերձարանում մարմնի և օրգանների համար կշռություն,
- 27.8 դատական մարդաբան (անթրոպոլոգ),
- 27.9 դատական ստոմատոլոգ:

28. Թունաբանական ուսումնասիրության ակտի ձևակերպման ընթացակարգ

Թունաբանական ուսումնասիրության ակտերը ճշգրիտ մեկնաբանելու, հասկանալու և հետագայում օգտագործելու համար պահանջվում են հատուկ գիտելիքներ ստորև թվարկված կետերի վերաբերյալ՝

Դատական բժշկին անհրաժեշտ թունաբանական ուսումնասիրության տվյալներ՝

- 28.1 վերցված նմուշի աղբյուրը,
- 28.2 ստուգված նյութերի տեսակը (type of screen),
- 28.3 ուսումնասիրությունների մեթոդները,
- 28.4 ուսումնասիրության արդյունքները:

29. Ստացված տվյալների արձանագրման ընթացակարգ

Ապացույցների մշակումը փաստագրելու համար պարտադիր պայման է ապացույցների պահպանումն ու դրանց ժամանակագրական արձանագրումը:

Դատական բժիշկը կամ օգնականը պետք է՝

- 29.1 հավաքագրի, փաթեթավորի, նշագրի և պահպանի բոլոր ապացույցները,
- 29.2 իրականացնի բոլոր ապացույցների ժամանակագրական արձանագրում:

Բաժին Ը: ՓԱՍՏԱՁՂԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

Գործելակարգի այս բաժինն անդրադառնում է դիակի դատարժշկական փորձաքննության արդյունքների վերլուծության ու փորձագիտական եզրակացության ձևակերպման դրույթներին՝ սահմանելով չափանիշներ այդ գործընթացների համար:

30. Դիակի դատարժշկական փորձաքննության եզրակացություն

Դիակի դատարժշկական ուսումնասիրությունը և դատարժշկական դիահերձման եզրակացությունները պետք է լինեն ընթեռնելի, ձեռք բերված տվյալների նկարագրմամբ և ներառեն մեկնաբանություններ և եզրահանգումներ՝ ավելի տեղեկատվական դարձնելու համար: Եզրակացությունում պետք է արձարձվեն հետևյալ բաժինները՝

- դիահերձման օբյեկտիվ արդյունքները համաձայն ձեռք բերված տվյալների, որոնք ներառում են հյուսվածաբանական, թունաբանական և լրացուցիր այլ ուսումնասիրությունների արդյունքները, մանրադիտակային ուսումնասիրությունը, և այլն
- դատական բժշկի մեկնաբանությունները (հետևողությունները):

Դատական բժիշկը պետք է՝

- 30.1 պատրաստի գրավոր նկարգրական եզրակացություն յուրաքանչյուր դիահերձման համար,
- 30.2 արձանագրի ուսումնասիրության ամսաթիվը, վայրը և ժամանակը,
- 30.3 արձանագրի հանգուցյալի անունը, եթե հայտնի է,

- 30.4 արձանագրի դեպքի համարը,
- 30.5 արձանագրի արտաքին ուսումնասիրության և, եթե կատարվում է, նաև ներքին ուսումնասիրության արդյունքները,
- 30.6 արձանագրի վնասվածքները,
- 30.7 արձանագրի արտաքին և ներքին վնասվածքների նկարագրությունը,
- 30.8 արձանագրի ձեռք բերված տվյալների բավականաչափ մանրամասն նկարագրությունը, որը կօգնի ախտորոշում, եզրակացություններ և հետևողություններ կազմելուն,
- 30.9 դատարժշկական դիահերձման եզրակացություններում արձանագրի ախտորոշումների և մեկնաբանությունների ցանկը,
- 30.10 արձանագրի մահվան պատճառը,
- 30.11 արձանագրի յուրաքանչյուր դատական բժշկի անունն ու պաշտոնը,
- 30.12 ստորագրի և թվագրի յուրաքանչյուր դատարժշկական ուսումնասիրության եզրակացություն:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ՝

Քննարկման/մշակման փուլում են: